

ՎԵԼԱՍ ԿԱՌՆԻԱՑԻ

ՎԵՆԵՏԻԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ ԺԶ ԴԱՐՈՒՆ

(Շարումակութիւն. ՑԱ էջ 27)

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ուրիշ գոն մ'ալ, և անվեպին ամբոսամուխից:



ԱՄՄԻՆ 1520, մայիսի ամենագեղեցիկ տօնական օր մի, արևել 'ի մուտք խնճարհելու աստեն, վաստուժկեկ երեխայ մի՛ շքեղ հագուած և օրիորդ աղախնոյ մի ձեռքէն բռնած, կ'երթային վեճեսնելոյ վաճառափողոցէն (I.e Mercerie) դէպ'ի Ա. Մարկոսի հրապարակութազմութեան երթևեկին ամենաշխոյժ և յաճախեալ խռնեալ ժամն էր: Այս բազմութեան մէջ ըստ սովորութեան՝ վեր վար երթևեկիու կը զնապին նաև տղաքք և աղախնապէ: Վերջիններս իրենց տերանց որդիները շրջագայութեան բերելով:

Վերցիչեալ երեխայն ձևլիքուտ Ակրէմինի որդին Անտոնիկն էր: որ անկասակծ կերպով իւր մօրը հետ վկասորինէի մօրեղօրով հարուստ ժառանգութիւնը կը վայելէր:

Ինչպէս այն հասակին ամէն տղաքք՝ ինքն ալ աղախնոյն ձեռքը թողուցա՞ի իւր հասակակից տղայց հետ կը խաղար. մինչդեռ իւր օրիորդ առանցորդն ժպտեւով շրթունքները կը սեղմէր՝ զեղեցիկ պատանոյ մը քաղցրիկ խօսքերէն ազգեալ, որ սպրըկի հագուած՝ նորա ընկերակցեր էր ամրող ճամբան: Սակայն եթէ Աննիկ (այս էր աղախնոյն անունն) իւր նոր հոմանոյն խօսքերէն աւելի ուշ գնչէր (ինչպէս իւր պարտքն կը պահանջէր) իրեն յանձնուած տղուն վրայ, պիտի անդրադանար՝ որ տղան շատ անգամ քօղաւորեալ կնոջ մի զննողութեան նիւթեան, որ շքեղ երգով սկ ազգուու երկայն և խիս քօլ մի կրէր իւր բովանդակ վիմաց վրայ, ուստի և անշնարին էր առաջին նայուածքով ճանչել նորա երիտասարդուհի կամ պառակ լինելու:

Աննիկ՝ քովին անբաժան ունենալով իւր զարգարուն սիրականը և իւր առջելը ձգած զտղուն՝ քայլելը դէպ'ի Փոքր Հրապարակն ուղղեց (La Piazzetta): Քօղաւորեալ կինն իրեն կը հետեւէր չափաւոր հեռաւորութեամբ, և նորա ստէպ ստէպ գոլուխ այն կողմը գարձընելէն՝ ուր կ'երթար փարթիկ ընկերութիւնն, կը հասկըցուէր որ նորա փափազն էր աշքը չկորանցընել զայն: Տղան սկսաւ ուրի մանկանց հետ խաղալ, և Փոքրիկ Հրապարակին մէջ վեր վար կը վազվուսէր, և երբեմն երբեմն ծիծաղելով աղախնոյն զգեստներուն կը պլանէր, երբ զինքը բռնել ուզող տղեկներու ձեռքէն փախիլ կը լսնար: Աննայի շորս դին պտոյտ ընելով:

Վերջապէս Աննայի սիրական պատանին կամ այն է որ յոզնեցաւ սորի վրայ կինալէ, առանց իւր երկայն խօսկցութենէն արդինք մի ստանալու, կամ այն է որ իւր նպատակին հասաւ, դորովալից նայուածքով և փափուկ կերպով իւր գեղանոյն ձեռքը սեղմելով հեռացաւ իրմէն ճիշտ այն վայրկենին, երբ զաղախին իւր սիրաշարժ մոտածմունքներէն սթափեցուց սուր ճիշ մի, այն տղայց խմբիկէն ուղղեալ, որոց հետ իւր փոքրիկ տէրն կը զուարձանար:

Աւելին գիմեց հռն, և զսաւ Անտոնիկը (այս գողարիկ վերջաւորութեամբ կը կանչէին ձեւթրուտի որդին) ողբուշացի մէջ, թաշկինակը երեսին վրայ բռնած, որ քանի մ' արեան կաթիլներէ բժաւորեալ էր. և նորա օգնութեան հասեր էր այն քողաւորեալ կնիկն, որ քիչ առաջ նկարագրեցինք:

— Բան չկայ, գիտնաս, բարի աղջիկ, ըսաւ ազախնոյն այն կինն. տպան վաղիրուտելով սահեցաւ, և երեսը սալայատատիկն զարկաւ: Քիչ մ' արին կը վազէ քթէն, այն ալ քիչ տատենէն կը գաղրի:

— Տեսնեմ, Անտոնիկ, ըսաւ խնամիք ցուցընելով աղախինն, մէկդի առնելով թաշկինակը տղուն դէմքէն, որ գեռ իւր ճիշն ու լացը շարունակելու: Հետ էր:

— Բան չկայ, բան չկայ գիտնաս, հանդարտէ: Երթանք դեղավաճառի մը մօտ և լուալով ամենայն ինչ շուտով կ' անցընեմ:

— Ես ալ ճիշդ նոյն բանն ըսի, ըսաւ անծանօթ կնիկն, որ այն միջոցին ժամանակ գտեր էր տղուն ձեռքէն բռնելու, և աւելցու:

— Փոխանակ դեղամոց մ' երթալու, ինչպէս կ' ըսես, լաւ է որ մօտ եղող կարկանդակներ վաճառողին երթանք: Հոն փափաքածնիս կը գտնենք, և ես ալ իրեն քաքարներ կը գնեմ: Խեղոն տղայ... վնաս ըրիր քեղի, հա: Այս օրհնեալ տղաքներն ամէնքն ալ այսպէս են: — Ի՞նչ անուն ունի, հարցուց յետոյ քովը կեցող աղախնոյն:

— Անտոնիկ, տիկին:

— Անտոնին իմացայ, մականունը կը հարցընէի:

— Ալքէմին: Զարուստ որբեւլսրի տիկնոջ մի որդին է, որ իւր հանգուցեալ հօրեղոր տուացուածոց ժառանգ եղաւ դեռ քանի մ' ամիս հազիւ կայ:

Փօղաւորեալ կնիկն այն անուան վրայ ցնցուեցաւ: բայց այս բանիս ուշ չդրա օրինորդ աղախինն, որ լալկան տղուն արցունքները սրբելու զբաղեր էր:

— Քանի տարեկան է այս տղուն, հարցուց անծանօթ կինն:

— Դեռ եօթը տարին լմնցուցած չէ:

— Իսկ գուն երկար տաեն է որ այն տիկնոջ ծառայութեան մէջ ես:

— Գրեթէ ամիս մ' է:

— Վենետիկցի՞ ես:

— Չէ, տիկին, Վենետիկոյ շրջականներէն եմ:

Այս պատասխաններուս վրայ անծանօթին դէմքն յայտնի ուրախութեան նշաններ երևուց: և յետոյ շարունակեց:

— Շատ տատենէ՝ ի վեր է որ Վենետիկ հաստատուած ես:

— Չէ, տիկին, հազիւ երկու ամիս կ' բնէ: Ուաջ Տրէվիզի մէջ պարոնի մը քով կը ծառայէի: յետոյ հոս եկայ, և գրեթէ ամիս մը ստարական ընսանեաց քով կեցայ: որոց մեկնելէն վերջը՝ այս տղուն մօրը ծառայութեան մէջ մտայ: Շատ կը ցախմ տղուն հանդիպած այս գժբախտութեան վրայ, աւելցուց: և դէպ' ի տղան դանալով՝ հարցուց: Դեռ ցատ կը զդան, Անտոնիկ:

— Չէ, պատասխանեց տղան: այլ քաքարներուն հոտը կ' առնում որ ինծի շատ ախործելի են:

— Երթանք ուրեմն շուտով գնենք, պատասխանեց անծանօթին, տղան դէպ' ի խանութ մը տանելով, ուր կը գտնուէին առաստութեամբ տեսակ տեսակ կարկանդակներ և ուրիշ ազնիւ շաքարեղէններ՝ բերնի փրփուրը վազցընելու չափ:

Հոն հանելով տիկինն ազակեց խանութպանին աւազանիկ մը շնորհէ և ջուր, տղուն երեսը լուալու համար: և մինչդեռ ազախինն այս ծառայութեան կը զբան կէր, տիկինն ապազրեց շատ մի կարկանդակներ և քաքարներ, գորս խանութպանն փութաց նորա առջև սեղանաւախտին վրայ բերել:

Տղան՝ իւր հասակակցաց նման որկրամու, հազիւ թէ աղախինն նորա երես

լուալը լմնցուց, դիմեց փութով սեղանատախտին առջև, և առանց կանխառ տի-
կնոյ հաւանութեան՝ սկսաւ ետևէ ետև բերած քաքարներէն սւտել:

Աննիկ յանդիմանեց զինքն այս պակասութեանս համար մինչդեռ անժանօթն,
որ միշտ քողաւորեալ մնաց, ըսաւ.

— Թո՞ղ որ ուտէ, խեճն պղտիկը. տղաք շատ սիրելի են ինծի: Դուն ալ քանի
մ'անուշեղէն հրամմէ՛. ես ամենեան չեմ ուտերը.

Օրիորդն յարգանոր մէկ կամ երկու քաքար առաւ, մինչդեռ տղան տախտակին
վրայ մասցածները լմնցընելու հետ էր: Տիկինն վճարքն հատուցանելով եղաւ
իանութէն, միշտ տղան ձեռքէն բռնելով. իրեն կը հետեւէր աղախինն:

— Դէպ ուր պիսի երթաք, հարցոց վերընսոյ:

— Վաճառափողոցէն դէպ 'ի Ծիամթոյ, պատախանեց աղախինն:

— Ճեզդ իմ ամբաս է, և թէ որ ձեզի անհանց չէ՝ կրնամ ընկերել ձեզ:

— Հաս սիրով, ըսաւ օրիորդն:

Ես երեքը միասին վերըյիշեալ նամբէն սկսան երթալ: Գիշերը արդէն վրայ
հասեր էր, և փորոցաց մէջ խուռն երթևեկը կը գտնուէին: Սուրբ Մարիոսի
հրապարակէն դէպ 'ի Վաճառափողոցը մտնելու ժամանակ, երկու կանանց և
աղուն գնացած համբան խափանեց բազմութիւն մ'ուրախ զուարթ երիտասար-
դաց, որոց կ'առաջնորդէր խումբ մի նուազածուաց քանի մի երաժշտական
դորդիներով: Այս բազմութենէն պատճառեալ խառնակութիւնն քանի մը քայլա-
փոխի հեռաւորութիւն ձգեց ընդ մէջ օրիորդ աղախինյոյ և անժանօթ կնկան, որ
միշտ տղան ձեռքէն բռնած կը քայլէր:

Աննիկ լանաց շտապել քայլերէ՛ աննաց հասնելու համար, բայց 'ի զուր:
Բազմութիւնն քնաց խանեցաւ, և զինքը շափ մը մինցաւ հեռու բռնեց իւր
ընկերափոցներէն, և այս շափն՝ խառնակութեան պատճառաւ միշտ անելու հետ
էր: Բայց աղախինն կը մտածէր որ այն կինն և տղան խառնիճաղանէն աղատ
տեղ մը կենակալով իրեն կը սպասէին:

Ընդհակառակն անծանօթն իւր ընթացքը կ'երագէ՛ր որշափ կարող էր, և հագի-
թէ ներքնափառոցի մը ծայրը հասաւ, հոն մուռ տղուն հետ մէկտեղ, և ան-
երևոյթ եղաւ աղախինյոյ աշքէն:

Աղախինն այն ինչ կրցաւ բազմութենէն աղատիկ՝ դիմեց այն փողոցը՝ ուր մտեր
էին սիրինն և տղան, վասահ զիրենք հոն գտնելու. բայց 'ի զուր: Դիմեց դէպ
'ի Ծիամթոյ, հոնդիպեցաւ որուն վերըյիշեալ բազմութեան. մուռ անոնց մէջ
բարձր ձայնով հարցընելով թէ արդեգ տեսեր էին տրիկն մի տղու մը հետ բայց
զոր տեղ չունչ հասոցց: Ենցն հարցմունքն ամէն մէկ հանդիպած մարդուն կը
կրկնէր, բայց ուրի պատախան չէր ընդուներ, եթէ ոչ կամ ծաղրածու կառտակ
մի և կամ որ և է անպարկետ բացատրութիւն: Ծան և նորա առաջնորդն այլ
ևս մինչար էր գտնուել:

Այս քօլաւորեալ տիկինն, անշուշտ գուշակեցին մեր ընթերցողք, մեզի ծանօթ
Ավլիվեարա պառաւն էր, վասի տալն: Ինքն հազիւ տղուն հետ մինակ մնաց և
աղատ աղախինն, երագեց իւր քայլերը, իւր հետ քաշկուտելով Անտոնիկը, որ
բոլորովին զրագեր էր գրպանին մէջ ժողոված առատ անուշ խմորել զններն ու-
տելու: Այս կերպով յետ զանազան նրբուդիներէ անցնելու մոռա պառաւն ուղղոց
մի մէջ, որ կը հանէր քաղաքին երկորդական ծովանփանց միոյն վրայ:

Սովորափութեալ պատրաստ կեցեր էր ինդուց մը՝ իւր դիմակաւոր նաւավարով:
Այս վերջին հազիւ տեսաւ զԱվլիվեարա տղուն հետ մէկտեղ, շուտ մ'արագա-
բար ցամաք ցատքեց, գրկեց զողան և մոռաց թէցէնց ներըն:

1. Նշամաւոր եմ իրեմց ամծութեամբ զեմետկի փողոցմերը:

2. Նաւակիմ փոքրիկ սեմեակմ:

Տղուն հետ ներս մոռաւ նաև պառաւն, որ գրպանէն թաշկինակ մի հանելով՝ կապեց անոյ տղուն բերանը որպէս զի չաղաղակէ. մի և նոյն ժամանակ շնչել տուաւ տղուն փոքրիկ շիշի մէջ պարունակուած հեղանիթ մի, որը նա իւր պարանոցէն կախուած կը կրէր:

Նաւավարն՝ թին ձեռքբը՝ նաւակին դեկի կողմն անցաւ, և ինորոշն արագարար ներս մոռաւ այն բաւլածն լրտնցից մէջ, որք կը շրջապատեն վ ենեսիի փողոցները: Այս բանս այնքան ճարտարութեամբ, այնքան երագութեամբ՝ ի գործ գորուեցաւ, որ ոչ ոք այն յափշտակութիւնն անդրագարձաւ: Տղան շիշին միշի հեղանիթը հոտուտելէն վերը՝ խոր թմրութեան մէջ ինկաւ: Ժամ մը վերը խեղճը տձեւ կմակաք մի գարձեր էր Վլասի խոհանոցին մէջ:

Վիկոսորինէի դժբախտ գուշակութիւնն կատարուեր էր:

Շարունակելի

ՀԱՌԵ

Քարացեալ կին մը. — Վինիթէկի օրագրաց մին այսպէս կը գրէ.

Գրեթէ 16 տարիէ ՚ի վեր է որ այս քաղքիս մէջ Ռ.օլատ անուամբ մարդու մը Ատելայիտ ամուսինը վախճանեցաւ, և թաղեցին զայն քաղքէն Հ0 մղոն հետու տեղ: Արդ, մերձակայ օրերուս մէջ Ռոլատ իւր քանի մի բարեկամզքն ՚ի զերեզմանոց կ'երթայ, ուր թաղուած էր իւր ամուսինը, որպէս զի ուրիշ գերեզմանոց փոխազրէ զմեռեալը: Կը զարմանայ մեծապէս տեսնելով ինէ վախճանելոյն մարմինը անարատ մնացեր է, և մազ մ'իսկ զիլին չի կորսուած:

Դիսկը վերցնելով կը նային որ ծանր է և իրենց ոյժը չի բաւեր, կը կանչեն շատ մ'անձինք յօգնութիւն, և կ'իմանան որ 700 լիպրէ կը կշռէ: Կը քննեն վախճանելոյն թաղուած տեղը, և կը տեսնեն որ դագաղը շարունակ կ'ոռոգի եղեր կալագարային ջրոյ փոքրիկ վտակէ մը, և այս պատճառաւ դիակն ալ քարացեր է:

Զեան մէջ ծլոդ ճադիկ մը. — Սիպերիոյ հիւսիսակողմն գտնուեցաւ նոր ծաղիկ մը, որ Յունուար ամսոյն մէջ կը բուսնի սառնապատ երկրին վրայ, օրուան մը մէջ կը բացուի և երկրորդ օրը կը թառամի և կը մեռնի: Երեք տերեւ միայն ունի, որք կարծես ծածկուած են ձեւան մանրադիտական ասղամբք. ծաղիկն աստղաձեւ է. սրսիկըն՝ որք հինգ են թուով, երրորդ օրը ադամանդի նման փալփլուն կէտեր իրենց վրայ կը ցուցնեն. ասոնք են սերմերը: Անթօսքոդ ճանապարհորդն ժողվեց այս սերմերէն քանի մի հատ և բերաւ ՚ի Պետրոսուրդ. տնկեց զանոնք ձիւնալից անօթոյ մի մէջ, և քիչ ժամանակէ բացուեցաւ ծաղիկն գեղեցկապէս:

